# Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 15 | Հոկտեմբեր | 2019 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 15 | Հոկտեմբեր | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Ա | 8326780545 |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| **Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ** | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձ

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 0 3 4 4 8 |
| [9] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 3 4 4 8 / 1 |
| [11] Բանկային տվյալները | Հայբիզնեսբանկ ՓԲԸ N 11500166513800 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձ

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ծառայության ժամը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | 66153419 դատահոգեբանական փորձաքննություն | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | X | 6566.67 | 39400 |

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

15/10/2019 14:32:53

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

29 մայիս 2019թ.

ք. Չարենցավան

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Չարենցավանի քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա. Ս. Իսկանդարյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 66153419 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի մարտի 10-ին ժամը 11.00-ի սահմաններում Չարենցավան քաղաքի Քոչարի փողոցի 53 հասցեում գտնվող «Անահիտ» խանութում, նշված խանութի աշխատակիցը, ինքնակամ իրականացնելով իր իրավունքները, չի վերադարձրել վաճառված ապրանքի համար Միշա Մելիքի Սաֆարյանի կողմից վճարված գումարից 4.000 դրամ մնացորդը՝ այն պահելով Միշա Սաֆարյանի նախկին պարտքը մարելու նպատակով, որով էական վնաս է պատճառվել վերջինի իրավունքներին և օրինական շահերին:

Սթափության վիճակի զննության մասին արձանագրության համաձայն, Միշա Սաֆարյանի կողմից արտաշնչած օդում հայտնաբերվել է 1.11 մգ/լ ալկոհոլ:

Համաձայն «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից ստացված գրության. Միշա Մելիքի Սաֆարյանը«չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հոգեբուժական կաբինետում դիսպանսեր հաշվառման մեջ է գտնվում 27.07.2009թ. «թեթև աստիճանի մտավոր հետամնացություն» ախտորոշմամբ:

Որոշում է կայացվել դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին, սակայն Միշա Սաֆարյանը փորձաքննության չի ներկայացել՝ Չարենցավան քաղաքից բացակայելու պատճառով: Որոշում է կայացվել փաստաթղթային դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին:

Դեպքի առթիվ 26.03.2019թ-ին ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 66153419 քրեական գործը:

2019 թվականի մարտի 27-ին քրեական գործն ուղարկվել է Չարենցավանի քննչական բաժին: Նույն օրը որոշումներ են կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու և Միշա Սաֆարյանին տուժող ճանաչելու մասին:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 81ա եզրակացության. Միշա Սաֆարյանի ստացած մարմնական վնասվածքը ներկա տվյալներով /ըստ բժշկական փաստաթղթերի/ աջ նախաբազկի շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդի ձևով, հասցվել է բութ կոշտ առարկայով, հնարավոր է որոշման մեջ նշված ժամկետում և հանգամանքներում, որն առողջության թեթև վնասի հատկանիշներ չի պարունակում:

Պարզվել է, որ 2019 թվականի մարտի 10-ին ժամը 11.00-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունից ահազանգ է ստացվել ՀՀ ոստիկանության չարենցավանի բաժին այն մասին, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն է զանգահարել Միշա Սաֆարյանը և հայտնել, որ իր ահազանգով ժամանած ոստիկանության Չարենցավանի բաժնի ծառայող Սամվել Տոնոյանը ծեծել է իրեն:

Նկատի ունենալով, որ Միշա Սաֆարյանի հոգեկան լիարժեքությունը, ընկալունակությունը, ինչպես նաև քրեական գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատահոգեբուժական և դատահոգեբանական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-246 և 248 հոդվածների պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 66153419 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովին և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հոգեբաններին:

2. Փորձագետներին պարզաբանման համար առաջադրել ներքոհիշյալ հարցերը՝

ա. Միշա Սաֆարյանը նախկինում և ներկայումս հոգեկան հիվանդությամբ տառապում է, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչ հիվանդությամբ է տառապում և որ ժամանակահատվածից:

բ. Եթե Միշա Սաֆարյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա 2019 թվականի մարտի 10-ին այդ հիվանդությունը նրան զրկել է իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ. Հաշվի առնելով Միշա Սաֆարյանի մտավոր զարգացման մակարդակը, անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող է արդյոք նա ճիշտ ընկալել և վերարտադրել գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները, մասնակցել քննչական գործողությունների և դեպքի էական հանգամանքների վերաբերյալ տալ ճշմարտացի բացատրություններ և ցուցմունքներ:

դ. Հաշվի առնելով Միշա Սաֆարյանի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները և քննվող իրավիճակի բովանդակությունը, կարող է արդյոք նա պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը՝ կատարվածի վերաբերյալ տալ իր սուբյեկտիվ գնահատականը, կարծիք հայտնել իր նկատմամբ կատարված արարքի կապակցությամբ, բողոքել կամ հաշտվել հանցանք կատարած անձի հետ /դեմ/, հասկանալ դրա իմաստն ու նշանակությունը:

3. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշմամբ չեն առաջադրվել, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն նրանց իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Միշա Սաֆարյանը գտնվում է ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայում:

5. Փորձագետին տրամադրել թիվ 66153419 քրեական գործը:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն հանձնարարել հիմնարկի ղեկավարին փորձաքննությունը կատարող փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով սահմանված նրանց իրավունքները և պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**Զարենցավանի քննչական բաժնի պետի տեղակալ** Ա. Ս. Իսկանդարյան